

ՄԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻՆ, ՆՐԵՎԱՆՈՒՄ

(1919 թ. սպրիլ)

ԱՆՌԻՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ,

Բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին ռուս մտավորականության այն ներկայացուցիչներից է, որը, 1916 թ. գալով Քիֆլիս, ապա լինելով Կովկասյան ռազմաճակատում, այնուհետև մինչև 1921 թ. ապրել ու ստեղծագործել է Անդրկովկասում: Ինչպես և խոստովանել է ինքը, այդ տարիների կյանքի՝ ճանաչողությունը, բարեկամությունը Հովհ. Թումանյանի հետ նրա կյանքում ունեցել են քախտորոշ նշանակություն:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին Ս. Գորոդեցկին հավատ էր ռազմաշունչ տրամադրությունների՝ Կովկասյան ճակատում պատերազմական արհավիրքներին ականատես բանաստեղծը վերանայում է իր հասարակական-քաղաքական ըմբռնումները, հասկանում պատերազմների, ազգային փոքրամասնությունների հանդեպ ցարական կառավարության վարած քաղաքականության էությունը¹, Այնուհետև նոր ըմբռնումներով Ս. Գորոդեցկին երկրամասում ծավալել է հասարակական-գրական բուռն գործունեություն, խմբագրել-հրատարակել է պարբերականներ, ամսանախներ: Մեծ հետաքրքրություն ցուցաբերելով Անդրկովկասի ժողովուրդների պատմության և հոգևոր մշակույթի հանդեպ, բանաստեղծությունների հետ միասին նա գրել է բազմաթիվ ու բազմապիսի հոգվածներ, նոթեր, ակնարկներ: Կարելի է ասել, որ Անդրկովկասի ժողովուրդների կյանքում չի եղել քիչ թե շատ նշանակալի որևէ իրադարձություն, որին մասնակցած ու արձագանքած չլինի նա: Մամուլում, մասնավորապես «Կովկասյան սլովո» լրագրի էջերում, 1917--1921 թթ. խառնակ ժամանակներում բանաստեղծը հետևողականորեն իր ձայնն է բարձրացրել հանուն ազգերի եղբայրական համերաշխության:

Ինչպես հայտնի է, Կովկասյան ռազմաճակատի զորամասերի հետ Ս. Գորոդեցկին եղել է Արևմտյան Հայաստանում, հասել մինչև Վան, թողնելով ուշագրավ նոթագրություն: Նույն ժամանակներում, 1916-ին, հանգամանք-

¹ «Շրթ սկզբից առաջին համաշխարհային պատերազմը, ես րոնվել էի ռուս-հայրենասիրական տենդով.— «Իմ ուղին» ինքնակենսագրականում գրել է բանաստեղծը:— «Ռուսաստան պաշտպանության» հաղթական ավարտը ես տեսնում էի «Ցարգրադի» գրավման մեջ: («Դու կլինես մերը, դու կլինես մերը այս սրբազան պատերազմում»):— Կրկնում էի ես սլավոնասեր եռմյակովի): ...պատերազմ հայտարարելու օրը ես գրեցի նաև բանաստեղծություն՝ «Ձմեռային պալատի առջև միապետական կարգերին հավատարիմ հպատակների ցույցի մասին» («Смеретские писатели. Автобиографии», т. 1, М., 1959, с. 326):

² «...և այնտեղ, ամենելով ազդատություն և ավերվածություն, որբեր հավաքելով այն նաև ապարհներին, որոնցում սպիտակին էին տալիս հաշ ժողովրդի տրորված» փոշի դարձած ուկրեները, ես սկսեցի ազատագրվել իմպերիալիստական պատրանքներից.— գրել է Ս. Գորոդեցկին (նույն տեղում):

ների բերումով նա եղել է նաև Երևանում: «Ռուսակոյն պովոդ»-ն տպագրել է բանաստեղծի տպավորությունները Երևանից: Դրանից երևում է, որ քաղաքի պատկերը շատ քիչ էր տարբերվում այն նկարագրություններից, որ գտնում ենք Լ. Գրիբոյեդովի 1819, 1827 թթ. նոթերում ու համակներում. Ի. Շոպենի «Исторический Памятник Состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи» գրքի էջերում³, «Եթե քաղաքի հիմնադիր. Վանի թագավոր Արգիշտին հիմա անցներ Երևանով,— գրում է Ս. Գորոդեցկին,— նրա սիրտը տեղից դուրս կթռչեր: Աղբահոր է և ոչ թե քաղաք: Երեվանցիները պարծենում են իրենց ցեխով. այն հասարակ չէ. այլ հոտավետ. անցնելն անհնար է, կես արշին կթաղվես»⁴:

1919 թ. ապրիլի 13-ին Երևանի «Ժողովուրդ» լրագիրը ծանուցում էր, թե ապրիլի 16-ին և 17-ին խորհրդարանի դահլիճում կկայանա Ս. Գորոդեցկու երկու դասախոսությունը: Սակայն դասախոսությունները տեղի չեն ունեցել, քանի որ ուս բանաստեղծը Երևան է ժամանել միայն ապրիլի 24-ին: Նշենք, որ Գորոդեցկուն Երևան էր հրավիրել քաղաքի «Գրական-գեղարվեստական ընկերությունը»:

Իր ուղևորությունը՝ Թիֆլիսից սկսած, նա ժամանակին մանրամասն արձանագրել և «Ընթանալով հորդություն դեպի Երևան» ընդհանուր խորագրով տպագրել է «Կավկասկոյն պովոդ» թերթում, որտեղ կարդում ենք. «24-ի լուսարացին (ուղևորության երրորդ օրը) մենք դուրս եկանք Լիլեքսանդրապոլից և առավոտվա տասնմեկին տեսանք Երևանը՝ իր զորշագույն եկեղեցիով, այգիներով և հանդիսավոր Արարատով: Լիլեքսանդրապոլից մարզարտափալլ ալեգարդը ժանյակավոր ամպերի միջից մեզ դիմավորեց սիրալիր: Նրա կեցվածքում երևում էր հանգստություն, բայց դարավոր ճակատը ակոսված էր խորունկ խոհերի կնճիռներով: Մենք համարձակություն չունեցանք աներես հարցումներով խոռվելու նրա աստվածային ներվանան և միայն երազում էինք, թե որքան հետաքրքիր կարող էր լինել հիմա և՛ մեզ, և՛ եվրոպայի համար հարցազրույցը Մասիսի հետ»⁵:

Մենք ասելով Ս. Գորոդեցկին նկատի ունենում ենք վաղոնում իր հետ Երևան մեկնող արտիստներին, որոնցից մեկը իտալուհի էր, մյուսը՝ ղերմանացի, և անգլիացի զինվորականին: Կայարանից կայարան նկարագրվում են այն վայրերը, որոնց վրայով անցել էին թուրքական ավերիչները: Լիլեքսանդրապոլի կայարանին կից դաշտը՝ ծածկված ջարդված զենքերով, մարդկային ոսկորներով ու զանգերով, որոնք ակնախոռոչներում դեռևս պահպանում էին սարսափի արտահայտություն: Իսկ այս ամենի կողքին, ցավով ավելացնում է նա, կոանալ-բարձրանալով նորաբույս կանաչի մեջ՝ ռարածում էին տանջահար կանայք, խումբ-խումբ բաց երկնքի տակ կիտված զաղթականները սպասում էին հայրենիք վերադառնալուն:

Միաժամանակ այս պատկերների միջից Գորոդեցկին վիճում է Եվրոպացիների, մասնավորապես անգլիացիների հետ, որոնք այդ օրերին տնօրինում էին Անդրկովկասում: Իր ակնարկը սկսելով ուղեկից անգլիացի զինվո-

³ Այս աթիվ տե՛ս Երվանդ Շահագիրյան, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 147, 150—173:

⁴ «Армянский вестник», 1917, № 1, с. 15.

⁵ «Кавказское слово», 8. V. 1919.

րականի հետ կենցաղային հակադրություններով, փորձում արդեն նա բացահայտ վերաբերմունքով դրում է. «Ընդհանրապես մենք հետաքրքրությամբ էինք հետևում մեր գրուցակցին (անգլիացուն—Ան. Ջ.), նա յուր ուսայի գերադասեց տիպարն էր: Իս տմենից ավելի ցանկություն ունեի նրա մեջ դտնելու հոմանցիների ժառանգորդին, որոնք, նվաճելով Բրիտանիան, իրենց արյունը թողեցին արքրիգենների երակներում: Հոմանցիներից չէ՞ արդյոք համառությունը, համոզությունը, զինվորական պեղաճակատությունը, հոգեբանության բացակայությունը՝ բառի այն իմաստով, ինչ տալիս են դրան Դոստոևսկին, Պլեխանովսկին, Մետերլինկը, Իհարկե, այդպես է, քանի որ Հոմեր նվաճեց աշխարհը ոչ թե նրբակերտ պատրիկներով, այլ իր ուսայի, այսպես ասած, յուրահատուկ տարատեսակով՝ երկաթյա զինվորներով: Եվ ահա հենց այդ յուրահատուկությունը պայցվում է ժամանակակից անգլիացիների մեջ»⁶:

Ս. Գորոդեցկու ուղևորությանը նախորդել էր հայ-վրացական միջադեպը՝ որի հրահրողը Անգլիայի տիրահռչակ ներկայացուցիչ զննապետ Թոմսոնն էր: Նույն այն Թոմսոնը, որը զլխավորել էր հակահեղափոխությունը Բաքվի կոմունայի դեմ և իր նկարագրի այդ կողմերով էլ նյութ է տվել հետադայում ստեղծված Ե. Ջարենցի «Բալլադ զննապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին» ստեղծագործությանը (1928 թ.):

Հայտնի է, թե Անգրիկական ժողովուրդների ներքին գործերին անգլիացիների միջամտությունը հենց այդ օրերին որպիսի վրդովմունքով էր ընդունում հայ և վրաց մտավորականությունը: Անգլիական գաղութարարների հանդեպ Գորոդեցկու վերաբերմունքը համընկնում էր մասնավորապես Հովհ. Թումանյանի գիրքորոշմանը: Դեռևս 1913 թ. «Հայկական հարցն ու իր լուծումը» ծավալուն հոդվածում, մերկացնելով անգլիական դիվանագիտության խարդախությունները հայոց ճակատագրում՝ սկսած ռուս-պուրկական պատերազմների ժամանակներից, Թումանյանը գրում էր. «Եվ էդ բոլոր պատերազմներում Անգլիան օգնում էր Պարսկաստանին: Իհարկե, նա չէր էլ մտածում հայ ժողովրդի մասին, և միայն մի ցավ ուներ—կտրել ռուսի առաջխաղացության ճանապարհը դեպի հարավ, դեպի Հնդկաստանի իր կալվածքները: Եվ էդպեսով գործում էր պարսկահայկական հարցի դեմ: Թե 1804—1807, թե 1810—13, թե 1826—28 թվականներին պարսից սարվազների զլուխն անցած՝ ռուսաց զորքի դեմ, նրանց հետ և հայ կամավորականների ու հայ ժողովրդի դեմ՝ կուլում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժնեներնրը, պայթում էին անգլիական հրացանները, որ 20 հազարով ու 40 հազարով իրենց ամեն ուղղամիջերով տալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի Անգլիական կոմպանիան: Ղարաբաղի ամրությունների ու էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական թնդանոթները, որոնց վրա մակագրված էր. «Ռեզավորներ», թագավորից—Շահերի Շահին պարզե»⁷: Միմյանց հաջորդող փաստարկումներով Հովհ. Թումանյանը ցույց է տալիս, որ Հայկական հարցում նույն դերը Անգլիան շարունակում էր կատարել ռուս-թուրքական պատերազմների օրոք: Նա այդ դերն էր կատարում նաև 1918—1920 թթ. ծանր ժամանակներում:

Իհարկե, Երևան մեկնելու Ս. Գորոդեցկու մտադրությանը և նախատես-

⁶ Նույն տեղում:

⁷ Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969, էջ 168:

սած դասախոսությունների թեմային անպայման տեղյակ է եղել Թումանյանը: Եվ ուշագրավ է, որ ռուս բանաստեղծի առաջին դասախոսությունը ամբողջովին, երկրորդը՝ զգալի մասով նվիրված էր Արևմտյան Հայաստանին ու արևմտահայ մշակույթին:

Ռուս բանաստեղծի առաջին բանախոսությունը կրել է «Վանի ստվերներ» վերնագիրը: 1916 թ. գարնանից մինչև 1917 թ.⁸ Ս. Գորոդեցկին շրջապակել էր Արևմտյան Հայաստանում. մի քանի անգամ եղել Վանում, իր բառերով ասած՝ Արևելքի այդ «արքայական գերեզմանոցում»: Նրան ցնցել էր Վանի հերոսական պաշտպանությունը, նա ականատես էր եղել հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգությանը, մահվան ու սովի ճիրաններից փրկել էր հարյուրավոր մանուկների, տեսածի ու զգացածի անմիջական տպավորությամբ հյուսել հոգեցունց բազմաթիվ բանաստեղծություններ, ակնարկներ ու հոգիվածներ: Միաժամանակ ահասարսուռ այդ արհավիրքները չեն վարագուրել բանաստեղծի հայացքը՝ դմայլվելու հայոց բնաշխարհի գեղեցկությանը, հայ մարդկանց բանաստեղծական վեհությանը ու հմայքով: Նրան բառացիորեն գերել էր «Արծաթահուռ հրաբուխների, երազուն լճերի, լեռնային ծաղիկների, շուրջպար բռնած աստղերի, հին ճանապարհների, հեղաշ զոմեռների և վեհորեն խոնարհ ուղտերի... մայրության սպասող վայրի աղչիկների և առաջնեկ զավակին ժպտացող գեղջուկ մաղոնիաների, մարդկային հմայիչ հոգիների աշխարհը...»⁹:

Իր բանախոսությամբ հենց այս աշխարհի մասին էլ խոսել է նա, նկարագրելով Վանի հիշարժան վայրերը, շնաշխարհիկ բնությունն ու լիճը, պատմելով «հարս ու փեսա քարի գեղեցիկ պատմությունը», ներկայացնելով Մհերի դուռն ու բուրգի վրայի այրերը, ճարտարապետական հուշարձանները:

Արևմտյան Հայաստանում շրջապակելիս Ս. Գորոդեցկին տեսել, բանաստեղծական հոգով զգացել ու դնահատել է հայոց ճարտարապետության կատարելությունը: «...Վանի հնությունները, — գրել է նա, — ճարտարապետական հուշարձաններն են... Բայց այն ժամանակների ճարտարապետությունը, երբ մարդու արվեստը բնության ստեղծագործության շարունակություն էր. այդ ճարտարապետությունն այնպես զանգվածային է, վիթխարածավալ ու փառահեղ, որ ավելի մոտ է բնության ուժերի տարերային թափին, քան մարդ-արվեստագետի ջանքերին»⁹: Դասախոսության մեջ Ս. Գորոդեցկին բացատրում է դրա պատճառները, դիտելով, որ հայ ժողովուրդը, ընդունելով քրիստոնեությունը, սերբեք չի մոռացել իր անցյալը... իր հեթանոսական աշխարհը¹⁰, նա չի ոչնչացրել իր հնորյա տաճարները, այլ դրանց վրա կառուցել է նորերը:

Հայոց ճարտարապետության ներգաղնականությունն իր լուսաշխարհային երկրի բնությանը, ինչպես հայտնի է, արձանագրել են շատերը. բայց այն հատկանշվում է նաև աննյութեղեն երկնասլացությամբ, որը Ավ. Իսահակյանի մտաբերումով մշտապես հավաստելիս է եղել Թ. Թորոմանյանը¹¹:

⁸ Ս. Գորոդեցկի, Գորոդեցկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1980, էջ 43 (այսուհետև՝ Ս. Գորոդեցկի):

⁹ Նույն տեղում, էջ 61:

¹⁰ «Ժողովուրդ», 11. V. 1919:

¹¹ Ավետիս Իսահակյան, Սրկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1977, էջ 75—76:

Ուշագրավ է, որ բանախոսության մեջ հայ ժողովուրդը չի մոռացել «իր հեթանոսական աշխարհը» ելակետից էլ Ս. Գորոզեցիկն վերլուծում ու գնահատում է Վասպուրական աշխարհին առնչվող լեզնեղներն ու զրույցները՝ «Ժողովուրդ»-ի թղթակիցը (Մ. Ք. ստորագրությամբ) հաղորդում է, որ անդրադառնալով «Արայի և Շամիրամի» պատմությանը, ռուս բանաստեղծը նշել է, թե նրա ... արժեքը շատ մեծ է և... իր խորությամբ կարող է համեմատվել Քրիստոսի մասին եղած լեզնեղի հետ»¹²։ Այնքան է, Ս. Գորոզեցիկն նկատի ունի մահից հետո արալեզների միջոցով հաղորդելու և քրիստոնեական ավանդությամբ Քրիստոսի հարություն առնելու քնդհանրությունը, որը նա շեշտում է նաև Փոքր Մհերի լեզնեղը վերլուծելիս. «...հայ ժողովուրդը ցուցադրում է մեծ ուժ ու կորով և նրանց մեջ նա հաղթանակում է մահը և կյանքի գովքն է երգում։ Այդ լեզնեղներից զոմ էս կյանքի շունը։ Հայությունը առանց օգնության չի մնալ—Մհերը դուրս կգա դռան ետևից և այլևս ետ չի դառնա իր տեղը»¹³։

Հուսալքված հայությանը ամենից շատ հարկավոր էր հուսավորող, ոգեվորիչ խոսք։ Խորությամբ զգալով դրա կարևորությունը, Գորոզեցիկն իր բանախոսությունն այդ ոգով էլ կառուցել է, ժողովրդի հնադարյան մշակույթի հուշարձանների վերլուծությամբ վեր հանել նրա հույզերն ու սպասումները, կենսասիրական-կենսահաստատ մղումները, լավագույն ապագայի երազանքը։

Ինչպես այդ, այնպես էլ հաջորդ՝ «Ժամանակակից հայկական քնարերգությունը» դասախոսության միջով կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ տառապանքներից չընկճվելու կորովը, տոկունությունը, հայոց բանահյուսության և գրականության ավանդական հատկանիշներն են, և որ դրանք ժողովրդի սեփական հատկանիշներն են՝ արտացոլված նրա լեզնեղների մեջ։

Թղթակցի հաղորդումով իբրև նախաբան երկրորդ դասախոսությանը Ս. Գորոզեցիկն նախ անդրադարձել է XIX դ. վերջի և XX դ. սկզբի եվրոպական և ռուսական քնարերգությանը՝ այն համարելով «...պեսիմիզմով համակված հոգու արտահայտություն»¹⁴։ Պետք է արժանին մատուցել հաղորդման հեղինակին։ Հաղորդումից երևում է, որ նա ունեցել է գիտելիքներ, ճաշակ. բանախոսությունների բովանդակությունը վերարտադրել է շրջահայացությամբ, գրական երևույթների կողքին ըմոռանալով դրանց առաջացման պատճառները։ Հատկանշական է վերը նշված հոռետեսությանը Գորոզեցիկու տված բացատրությունը։ Նրա կարծիքով՝ «Բողոքներ, վերլներ, Բլուկ և ուրիշները երգում էին այն ցավը, որ տիրում էր մարդկային լքված սրտում։ Մարդը ստրուկ էր դարձել և ով որ չէր ուզում խոնարհվել պիղծ ու կեղծ հասարակարգի օրենքներին, նա հալածվում և վտարվում էր, ինչպես այդ եղավ Սսկար Ուայլդի հետ»¹⁵։

Անդրադառնալով հայոց բանաստեղծությանը, բանախոսը գտնում է, որ դարասկզբին, դուրս դալով ազգային շրջանակներից, այն արտահայտել է

12 «Ժողովուրդ», 11. V. 1919։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում։

համամարդկային տրամադրություններ, և որ «պեսիմիզմով համակված հոգու» զրսերումներ կարելի է գտնել նաև հայոց քնարերգության մեջ: Նա նշում է ընդհանրություն Լև. Իսահակյանի, Վ. Տերյանի և Վերլենի երգերի միջև, որոնցից վերջինը, եթե ընդունելի է, ապա միմեյի է Իսահակյանի դեպքում:

Բանաստեղծ Իսահակյանը հյուսել է և՛ մեղմ, երգիչիկ, և՛ կրքոտ, ծառացող քնարական երգեր, ինչպես Հայնեն, Հերմոնտովը: Միաժամանակ, եթե Վերլենի քնարերգությանը բնորոշ է մեղեդիկ սահուն հոսքը, մեղմ ելևէջները, ինչ տեսնում ենք Տերյանի երգերում, Իսահակյանի քնարերգությունը բնութագրվում է գեղանկարչական գունագեղությամբ, գունային, ռելիեֆային պատկերավոր բեկբեկուն անցումներով: Իսահակյանի ստեղծագործությունը բարձրացել էր ժողովրդական բանաստեղծության ակունքից. որից և ժառանգել էր իր օրգանական հատկանիշները: Իկյս իմաստով նշված ընդհանրության կողքին բնորոշ է Գորոդեցկու վերապահումը, բոտ որի՝ «...նրանց (Իսահակյանի և Տերյանի—Լև. Զ.) երգերի մեջ մենք գտնում ենք այնպիսի էջեր ևս, որոնք ցույց են տալիս, որ նրանք կարողացան ճեղքել մութը և դուրս գալ գեպի լուսավոր երկիր»¹⁶:

Լևոնովը ուշագրավը Հովհ. Թումանյանի և Գ. Վարուժանի ստեղծագործությանը Գորոդեցկու տված գնահատությունն է: «Լավ օրերի հույսը երբեք չի մարել հայ բանաստեղծների մեջ, այդ բանը առավել ևս շեշտված է Գ. Վարուժանի և Հ. Թումանյանի երգերում»,— եղբակացնում է նա:

Ս. Գորոդեցկու երևանյան բանախոսություններին նախորդել էր Թումանյանի ծննդյան հիսնամյակի տոնակատարությունը: Լև. Տիգրանյանի «Անուշի» վեհաշունչ ղողանջներով ծայր առած հանդեսները, հանդիպումները, վեկույցները Թիֆլիսում տևել էին մեկ ամսից ավելի և, իհարկե, դրանցից շատերին ներկա էր գտնվել Ս. Գորոդեցկին: Իկյո շարքում հիշարժաններից մեկը Գ. Վարուժանի ծննդյան 35-ամյակին նվիրված երեկոն է, որ տեղի է ունեցել փետրվարի 25-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի լեփեցուն դահլիճում: Իր մի մասով Թումանյանի պատվո երեկոյի վերածված այդ օրվա մասին մեզ են հասել մանրամասն տեղեկություններ մամուլից, հուշագրական նյութերից:

«Ժողովուրդ»-ի հաղորդման մեջ ասված է, որ Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ ոուս բանաստեղծը նշել է, թե նա՝ «...թեպետ ողբերգության և ցավի երգիչ է, բայց նրա երգերը հաշտությամբ և խաղաղությամբ են համակված: Սվսույի գյուղացին մի ուժ է, որը միշտ հարություն կառնի և միշտ էլ կապրի»¹⁷:

Հաղորդման այս սեղմ տողերից հետևում է, որ այս և Վարուժանի 25-ամյակին նվիրված Թիֆլիսի երեկոյի Ս. Գորոդեցկու սլույթի ելակետերը նույնն են: Բարեբախտաբար իր այդ ելույթը նա ժամանակին դրի է առել և հրապարակել «Զակավկադսկոյն սլովո»-յում (№ 41)՝ «Դանիել Վարուժան (Սևբաստացի գեղջուկը)» վերնագրով, որից երևում է, թե ակմեիզմի տեսակետից և պահանջներով խորհրդապաշտության հետ վեճի մեջ մտած ոուս բանաստեղծը որքան բարձր է գնահատել Վարուժանի բանաստեղծական

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

արվեստը: Սկսել, ինչ հրադուր էին լավագույն սիմֆոնիստները՝ իրեն ժամանակակից պոեզիայի բարձրագույն նվաճում,— գրել է նա,— իրականացրեց սերաստացի գեղղուկը:

... Նրա խորհրդանշները լի են բարախուն կյանքով: Եվ այստեղ ժողովրդականը, ազգայինը ձուլված է համամարդկայինի հետ»¹⁸: «Գուշակը», «Դարձ» բանաստեղծությունների վերլուծությամբ արձանագրվում է Վարուժանի ստեղծագործության կենսահաստատ ուժը, լավատեսական հավատը:

Նշված բանաստեղծություններին, անշուշտ, ուսումնասիրելով անդրադարձել է նաև երևանյան բանախոսության ժամանակ, և ուշադրավ է՝ հենց լավատեսական հավատն էլ նա համարել է Վարուժանի և Թումանյանի ստեղծագործության ինքնահատուկ ընդհանուր հատկանիշը, միաժամանակ շեշտելով Թումանյանի անհնահատելի վաստակը կովկասյան ժողովուրդներին բարեկամության ամրապնդման գործում:

Ս. Գորոդեցկու այցը Երևան, ինչպես ասվեց, հաջորդել էր 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին վրաց մենչեիկներին և դաշնակցության կարճատևությամբ ծայր առած զինված միջադեպին: Ժամանակակիցները վկայում են, թե այդ օրերին որքան է տառապել Հովհ. Թումանյանը, որքան եռանդ ու ջանք թափել խաղաղությունը վերահաստատելու համար: Ե...երբ ոկվեց հայ-վրացական դժբախտ պատերազմը — վկայում է Ստ. Զոդյանը,— Թումանյանի անհանգստությունը կրկնապատկվեց:

Այդ օրերին նրա վիշտն անսահման էր: Այդ պատերազմը հրկու հարեվան ազգերի մեջ՝ նա համարում էր խելագարություն, տանջվում էր հոգեպես ու միջոցներ էր մտածում, թե ինչպես կարելի է արդյոք դադարեցնել այն: Բանակցում էր վրաց գրողների հետ՝ ժողով անելու, մտածում էր Քիֆլիսի հայ մտավորականության կողմից մի դիմում ուղարկել վրաց կառավարության և Երևան՝ Հայոց Ազգային խորհրդարանին (պառլամենտին), որ վերջ տան արյունահեղության և հաշտության ձեռք մեկնեն իրար»¹⁹:

Թումանյանի ապրած վշտին, նրա ջանքերին ինչպես այդ, այնպես էլ դրանից առաջ՝ Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու օրերին, ակնաստես է եղել նաև Գորոդեցկին, Թումանյանի հետ միասին մաքառել հանուն ժողովուրդների եղբայրության, և հիմա, ներկայացնելով Թումանյանի գործունեությունը, սրտապնդի: Խոսքով նորից ծառայում էր այդ գործին: Հաղորդման հեղինակը գրում է, թե բանախոսության վերջում ուսումնասիրելով շեշտել է, թե՝ «Ավելի մեծ լավատեսությամբ են լցված Հ. Թումանյանի երգերը: Թումանյանը իր ամբողջ կյանքը նվիրել է կովկասյան ժողովուրդների համերաշխության գործին և այսօր... Հ. Թումանյանը մի գեղեցիկ և մեծ ոգևորությամբ գրած ոտանավոր է նվիրում վրացի բանաստեղծներին»²⁰: «Նվեր վրաց բանաստեղծներին» վերնագրով այդ բերթվածում նա անհուն սիրով օրհներգում էր վրաց հողն ու վրաց ժողովրդին, իր հյուսած հեքիաթների, լեգենդների ոգով կրկին համոզված, որ վաղ, թե ուշ գալիս է «շարի վերջը», լարը պատժվում է և հաղթանակում է մարդկային եղբայրությունը:

18 Ս. Գորոդեցկի, էջ 96:

19 Ստեփան Զոդյան, Հուշերի պիր, Երևան, 1958, էջ 51:

20 Ժողովուրդ, 11. V. 1919:

Ինորոշ է նաև, որ Հովհ. Թումանյանի մասին խոսելիս Ս. Գորոզեցկին ծանրություն կենտրոնը փոխադրում է նրա հասարակական գործունեության վրա: Թումանյանի ստեղծագործության ժողովրդայնության վերաբերյալ խոսք էր եղել բազմիցս. նրա ծննդյան հիսնամյակի ողջ տոնակատարությունը անցել էր հենց հայ ժողովրդի կենսասիրության ու լավատեսության նշանաբանով, որի թելադրողը կրկին ինքը՝ բանաստեղծն էր: Հիշենք նրա պատգամը հարազատ ժողովրդի գրողների նոր սերնդին, որ մտաբերում է Ստ. Զորյանը Թումանյանի ելույթից՝ արտասանված Վարուժանին նվիրված վերը հիշատակված երեկոյում: «— Ես կուզեի, — ասել է Թումանյանը, — որ ձեր կյանքը և ձեր ճանապարհը լինի այնպես, որպեսզի ձեր բերանից անեծքի խոսքեր չլսվեն: Եվ ես հավատում եմ, որ հեռու չի այն օրը, երբ խաղաղություն ու ժողովուրդների եղբայրություն կլինի աշխարհում, և էդ խաղաղ եղբայրական աշխարհում հայ ժողովուրդն էլ իր արևի ձևեր կածի... և դուք էլ, ապագայի հայ գրողներդ, ոչ թե անեծք ու նզովք կկարդաք աշխարհին, այլ օրհնեղություն ու փառաբանություն...»²¹: Զորյանն ավելացնում է, թե Թումանյանի խոսքը այնքան «զգացված ու պատկերավոր էր», որ «հաճախ ընդհատվում էր ծափահարություններով, որ երբեմն փոխվում էին օվացիալիս: Բանաստեղծի խոսքի վարակող ուժը պայմանավորված էր նրանով. որ այն բոլոր երանգներով արձագանքում էր լայն հասարակայնության ձգտումներին ու սպասումներին: Նույնը կարելի է ասել Գորոզեցկու երևանյան բանախոսությունների վերաբերյալ. ինչպես վկայում է «Ժողովուրդ»-ի թղթակիցը՝ «Հասարակությունը շատ զոհ էր Գորոզեցկու դասախոսություններից: Դասախոսին հաճախ ընդհատում էին բուռն ծափահարություններով»²²:

Իր այցելության ընթացքում Գորոզեցկին եղել է քաղաքի և շրջակա հիշարժան վայրերում, էջմիածնում, ամենատարբեր վայրերում հանդիպել է նրան: Վանում համախմբված մշակույթի գործիչներից շատերին, կիսել նրանց ցավերն ու դառնությունները:

Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Ճանապարհորդություն դեպի Երևան» շարքի ակնարկները: Դրանցում կենդանի գույներով գծագրվում է քաղաքի հասարակական-քաղաքական կացությունը՝ «կուսակցական եռուն պայքարով», առօրյա մթնոլորտով: Եթե առաջներում քննկիչներն ապրում էին իրենց ներփակ տներում ու այգիներում, այժմ՝ քնակչության քաղաքական եռուզեռով ու հետաքրքրությամբ, կյանքը դարձել է անճանաչելի: Քաղաքական հարցերը զբաղեցնում են բոլորին, նորությունները տարածվում են՝ ինչպես ռադիոյով²³, — գրում է Գորոզեցկին: Այս և այլ իրողությունների կողքին. իբրև առաջիններից մեկը, Գորոզեցկին արձանագրում է նաև չարաղետ այն երկույթը, որի հեղինակները անվանվում էին մաուզերիստներ:

Ժողովրդի ճակատագրի ճգնաժամային իրավիճակում, երբ սովն ու համաճարակները ամեն օր խլում էին անհամար զոհեր, երբ ամեն պահ խառնակությունների ու հարձակումների վտանգի տակ էր հայրենիքը, Երևանի փողոցներում անպատիժ քայլում էին ավազակաբարո տղամարդիկ՝ կրակե-

²¹ Ստեփան Զորյան, *Նշվ. գիրքը*, էջ 36—37:

²² «Ժողովուրդ», 11. V. 1919:

²³ «Кавказское слово», 11. V. 1919.

յով լուսամուտներին ու ցուցափեղկերին, անմեղ մարդկանց վրա: Ահ ու սարսափի մեջ էր բնակչությունը, և Գորոդեցկին՝ անկեղծ բարեկամի դառնությունամբ, զգուշացնում էր դրա ծանր հետևանքները:

Հայաստանի ժամանակի քաղաքական կացության համար բնութագրական են խնջույքներին վերաբերող հատվածները վերջին՝ ա.Ն. 35-ը վերնագրով ակնարկում: Ս. Գորոդեցկու հետ Երևան էին եկել նաև արտիստներ, և ինչպես գրում է ինքը՝ «...դասախոսությունների ու համերգների շարքը դարձել է միաժամանակ խնջույքների շարք»²⁴ (ընդգծումը մերն է—Ան. Ձ.): Պատճառը քաղաքական-դիվանագիտական էր, որին նա տալիս է բազմանշանակ բացատրություն. «Իսկ բանկետները այժմ Երևանյան կյանքում խաղում են նշանակալի դեր: Ծվրուպացիների մշտական հերթափոխը, Պուադեբարի, Տեմբերլի, Վուդի և էլի ուրիշների ժամանումը, կարսյան տոնակատարությունները,— մեր բուհեմական եռյակի համեստ դալուստը՝ գուդադիպեց այս բոլոր իրադարձություններին»²⁵: Տեղն է նշել, որ այս խնջույքներին նախորդել էին առավել ճոխերը. մարտի 25-ին Երևան էր ժամանել գեղապետ Թոմսոնը և, համատարած սովի պայմաններում, առատորեն հյուրասիրվել՝ շքախմբով հանդերձ: Նկարագրելով վերջին խնջույքը անգլիացիների ու ֆրանսիացիների մասնակցությամբ, անսքող դառնությամբ նա ավելացնում է. «Բայց վվարճության պահին ես հանկարծ իմ ներսում սարսափ զգացի: Մոտեցա լուսամուտին: Մութ գիշեր է, Երևանյան սրահում Եվրոպան է, Սովորական հյուրասրահ, հնօրյա դաշնամուր— և Եվրոպացիներ: Երազ չէ՞ սա: Երկար է տեկու աչք»²⁶: Խոսքը որոշակիորեն վերաբերում է Եվրոպական երկրների գաղութատիրական քաղաքականությանը, որոնք հայ ժողովրդի թափած արյան վրա շարունակում էին իրենց դիվանագիտական առևտուրը:

Եվ սակայն հայ ժողովրդի և նրա մտավորականության դարավոր կողմնորոշումով Հայաստանի բոլորտը անբաժան էր Ռուսաստանից. որի արտահայտություններից մեկն էլ Գորոդեցկու այցելությունն էր Երևան, ինչպես արդեն նշվեց, գրական ընկերության հրավերով:

Ուշագրավ է իրոք. մինչդեռ դաշնակցական կառավարությունը մեկը մյուսի ետևից շարունակում էր ընդունել Եվրոպական և ամերիկյան գինվորական ու դիվանագիտական ներկայացուցիչների, Թիֆլիսի հայ մտավորականության ջանքերով նախատեսվում էր առավելապես ոռոս գրողներից ու արվեստագետներից կազմված խմբերի այցելություններ Հայաստան: Թիֆլիսի հայ դեմոկրատական մտավորականությունը ջանում էր ամեն կերպ օգնել ավերված հայրենիքին՝ իր կողքին ունենալով վրաց և ոռոս մտավորականության ներկայացուցիչներին՝ Ռոբակիձեին, Տաբիձեին, Գրիշաշվիլուն. Գորոդեցկուն, Կամենսկուն և ուրիշների: Այդ եղբայրական մտավորականության համագործակցության հետ կապվում են մշակութային բաղմուպիսի նախաձեռնություններ, այդ թվում վրաց և հայ նկարիչների ու քանդակագործների միմյանց հաջորդած ցուցահանդեսները, Սայաթ-Նովայի վրացերեն գրած Լրցերի հրատարակությունը, Կոմիտասի անվան ընկերության ստեղծումը:

²⁴ Նույն տեղում, 18. V. 1919:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

Ս. Գորոդեցկին իր մասնակցությունն է բերել նշված այս և մյուս բոլոր նախաձեռնություններին: Հայտնի են հայ, վրաց նկարիչների ցուցահանդեսներին նվիրված նրա հոդվածները, որոնք առանձնառում են գնահատությունների խորությամբ և ներուժամբ: Գեոևս Վանին վերաբերող ակնարկներում նա անդրադարձել էր հայ ժողովրդական երգերին, առաջագրելով կենսական մի պահանջ, որը մինչ այժմ էլ մնում է ուժի մեջ. «Ամեն մի ժողովրդի յուրաքանչյուր երգ, յուրաքանչյուր առասպել սուրբ է մեզ համար, քանզի ժողովրդի ստեղծած երգը գաղտնիք է՝ անմատչելի անհատական ստեղծագործությանը»:

Այդ գանձերը կարելի է ժողովել միայն մի եղանակով՝ ձայնագրելով. որպեսզի չաղավաղվի ոչ մի բառ, ոչ մի նոտա: Թանկ է յուրաքանչյուր տարբերակ, Եվ այդ տեսքով էլ պետք է պահպանվեն ժողովրդական ստեղծագործության երկերը»²⁷:

Երևանյան այցելության օրերին նորից լսելով այդ երգերը, ռուս բանաստեղծը կրկին հիշեցնում է այդ գանձերը մոռացությունից փրկելու անհրաժեշտությունը, շեշտում Կոմիտասի կատարած գործի նշանակությունը: «Ճանապարհորդություն դեպի Երևան» շարքի վերջին ակնարկում նա գրում է, որ Հայաստանի տարբեր վայրերի ազգաբնակչության բերանում այլևայլ հանգով ու տարբերակներով հնչող այդ երգերը «...ցույց են տալիս, թե որքան գանձեր կան հայկական ժողովրդական երգերում: Այժմ, երբ հասարակության մեջ հետաքրքրություն է բորբոքվում Կոմիտասի անձի և գործի հանդեպ, ժամանակն է շարունակել նրա գործը՝ լուրջ հիմքերի վրա: Պետք է օգտվել տարբեր շրջաններից կենտրոններում խմբված գաղթականներից, լսել նրանց երգերը և ձայնագրել»²⁸:

1919 թ. մայիսի սկզբներին Թիֆլիսում ձևավորված Կոմիտասի անվան ընկերությունը հանձն էր առել Փարիզում բուժվող երգահանի հոգաթությունը, նրա երգերի պահպանությունն ու տարածումը: Եվ ահա, ընկերության ջանքերով, որի կազմում էին անվանի գրողներ, նկարիչներ, երգահաններ, կատարողներ, մայիսի 21-ին, հիշարժան մի օր հայ երգարվեստի պատմության մեջ, Արտիստական ընկերության թատրոնում տեղի է ունենում առաջին մեծ համերգը. դա փաստորեն Կոմիտասի անգնահատելի ծառայության համընդհանուր ճանաչման սկիզբն էր կովկասահայ իրականության մեջ:

Ուշագրավ է, որ, արտահայտելով մտավորականության մտահոգությունը, հենց այդ օրերին Եղիշե Թադևոսյանը Արշակ Զուպանյանին հասցեագրած նամակում գրում էր. «Կցանկանալի ձեր կարծիքը Կոմիտասի առողջության մասին լսել, գիտեմ, որ այդտեղ հոգում եք, մենք էլ այստեղ նրա անունով հիմնեցինք մի ընկերություն, բայց դրամի կուրսը անչափ բնկած է... մեր նպաստը շատ աննշան բան է դուրս գալի՝ <u><u> մեծ ճիգ թափելուց հետո: Աստված նորան կատարյալ առողջություն տա»²⁹:

Նյութականին հակառակ մեծ էր հասարակական-մշակութային բարոյական նպաստը. բոլոր սպասումներից վեր էր համերգի հաջողությունը, որն

27 Ս. Գորոդեցկի, էջ 90:

28 «Кавказское слово», 18. V. 1919.

29 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Զուպանյանի ֆ., № 2191:

այնուհետև կրկնվում է մի քանի անգամ, Կասկած չի կարող լինել, որ հենց այս առաջին համերգին, թերևս Հովհ. Թումանյանի կամ հայ մտավորականներից մեկ ուրիշի կողքին նստած, ներկա է եղել Ս. Գորոդեցկին և նրանց հետ միասին վայելել Վ. Տեր-Առաքելյանի նշանավոր «Անտոնին», Սպ. Մելիքյանի երգչախմբի երգերը՝ «Գնա, գնա», «Լո, լո, լո» և մյուս կատարումները:

Անկաշառ բարեկամությամբ նվիրվելով հայ մշակույթի գնահատության ու պրոպագանդան գործին, ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Երևանյան այցելության օրերին Գորոդեցկին արժանացել է ոչ միայն Թումանյանի, այլև հայ լայն հասարակայնության, մշակութային անվանի ու շարքային գործիչների ջերմ սիրուն ու խոր հարգանքին: Այս առումով հատկանշական է «Ժողովուրդ»-ի թղթակցի արձանագրած Երևանի հասարակայնության տպավորությունը ուս բանաստեղծի բանաստեղծություններից և ընդհանուր պահվածքից: «Հայն հոգի ունեցող մի երիտասարդ է թվում Ս. Գորոդեցկին,— գրում է թղթակիցը,— նա աչքի է ընկնում իր լայնարձակ շարժվածքներով, անցնելիս ասես թի՛ բոլորին էլ դիպչում է: Ուր նա մտնում, այնտեղ իսկույն եթե կյանք է ստեղծվում, եւ ու գեւ է սկսվում: Սիրով նա մոտենում է ամեն մի արարածի և ամեն մի մարդու մեջ, թեկուզ լինի դա անտեր անտիրական Հակոբը (իր Վանի ծառան) նա կարողանում է կյանք և զեղեկություն գտնել:

... Վերջին տարիների ընթացքում կրած մեր տառապանքին նա լավ ծանոթ է, նրա քնքուշ և մարդասեր հոգին մեզ հետ միասին լացել է մեր դառն օրերը»³⁰:

«Կավկազական սլովո»-յի էջերում Գորոդեցկին խորունկ հոգվածներով միաժամանակ պրոպագանդել է ուս և համաշխարհային կուլտուրան, որ արժանի է առանձին հետազոտության: Ինչպես երևում է «Ժողովուրդ»-ի հաղորդումից, ուս գրականության, իր այդ օրերի հործունեության շուրջը նա գրույցներ է ունեցել նաև Երևանի գրական շրջաններում:

Թղթակցի հաղորդած համառոտ տեղեկություններից նախ երևում է, որ 1919 թ. Գորոդեցկին ղեկավարել է իր ակմեիզմի գեղարվեստական սկզբունքներին: Հավատարիմ էր մի կողմից հակադրվելով խորհրդայնապաշտական հիասթափությանն ու հոռետեսությանը, քանի որ համոզված էր, որ «Պոեզիան անպայմանորեն պետք է ընդունի կյանքի վճռական հաստատումը», հոռետես ձայնով հնչեցին «փրկության և վերածնության» ղողանջներ: Մյուս կողմից նա աշխատում էր բանաստեղծությունը ազատագրել «հոգի չպարունակող մեքենայից»:

Պարզվում է, որ իր գրական այդ համոզմունքները նա ուսուցանում է նաև իր ստեղծած «Բանաստեղծների համթարության» («Цех поэтов») երիտասարդ անդամներին, որից և թղթակիցը հետևանք է, անկասկած, Գորոդեցկու պրույցներից սերած նման եղրակացություն: Ակսոր Ս. Գորոդեցկին իրերի բերմամբ կտրված լինելով իր հայրենիքից միայն հեռվից հեռու ձայնակցում է վերածնված և նոր հոգի առած Ա. Բլոկի երաժշտության և քանքեր է թափում այդ նոր երգը լսելի դարձնելու Թիֆլիսում նոր ստեղծված բանաստեղծների համթարության միջոցով»³¹:

30 «Ժողովուրդ», 11. V. 1919.

31 Նույն տեղում:

Այլ. Բլոկի վերածնված, «նոր հագի առած» երգերը նրա «Տասներկուսը» և «Սկյութները» պոեմներն էին (1918 թ.), որոնց մեջ օրհներգվում էր հեղափոխության փրկարար առաքելությունը: Բախտի բերումով հայրենիքից հեռու՝ հեղափոխության, Սովետական Ռուսաստանի հետ էր և Մ. Գորոդեցկին, որի վկայությունը նրա 1916—1921 թթ. գործունեությունն է Անդրկովկասում, նրա աննահանջ նվիրվածությունը Ռուսաստանի ժողովուրդների բարեկամությանը:

СЕРГЕЙ ГОРОДЕЦКИЙ В ЕРЕВАНЕ

(Апрель 1919 г.)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Поэт Сергей Городецкий в конце апреля 1919 г. по приглашению «Литературно-художественного общества» Еревана из Тифлиса приехал на неделю в Ереван. В эти дни он прочитал для общественности города лекции по теме «Тени Вана» и «Современная армянская лирика». По возвращении С. Городецкий напечатал в газете «Кавказское слово» серию очерков «Путешествие в Эривань». Как прочитанные лекции, так и опубликованная серия очерков свидетельствуют о большой любви, а также преданности русского поэта армянской культуре и народу.